ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«06» 03 2026 թ.
№ ՊԳՏ/2-471

«ԼՎՍ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 08274474/
ՀՀ, ք. Երևան Դավթաշեն 2 թղմ. 32 շ. 6 բն.
էլ. փոստի հասցե՝ LVSGRUP77@gmail.com
Հեռ.՝ +374 96 88 09 99

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԼՎՍ» ՍՊԸ-ի միջև 15.04.2024թ. կնքված ԳՀԱՊՁԲ-24-7/1-4 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԼՎՍ» ՍՊԸ-ն ի թիվս մատակարարվելիք այլ ապրանքների պետք է մատակարարեր նաև 3000 հատ «Թևքանշան զորատեսակի «Զորային օղակ»», որից 1220 հատը չի մատակարարել, 100000 հատ «Թևքանշան զորատեսակի կպչուն ժապավենով», որից 9010 հատը չի մատակարարել, 3000 հատ «Թևքանշան ՀՀ դրոշ, կպչուն ժապավենով», որից 2580 հատը չի մատակարարել, 2000 հատ «Թիկնանշան գերատեսչական պահպանության», որից 490 հատը չի մատակարարել, ինչպես նաև ամբողջությամբ չի մատակարարել 400 հատ «Թևքանշան պատվոպահակային» և 3000 հատ «Թևքանշան Խաղաղապահի, կպչուն ժապավենով» ապրանքատեսակները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.03.2026թ.-ին միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԼՎՍ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել **370 260** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) և **58 640** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 30.12.2025թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **1 395 700** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **407 418** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2026թ. մարտի 13-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 1 395 700 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 407 418 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԼՎՍ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. մարտի 13-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ